

ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ
ARTUR HAKOBYAN

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ 16-17-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

15-րդ դարում հայկական Այրարատյան աշխարհը, որի կենտրոնն էր Երևանը, հայտնվում է նախ թուրքմենական Ղարա-Ղոյունլու, ապա՝ Աղ-Ղոյունլու ցեղախմբերի ստեղծած պետության կազմում: Այս ընդարձակ տարածաշրջանը հանդիսանում էր մի առանձին միավոր՝ խանություն, որի մեջ էին մտնում Այրարատյան նահանգի հիմնական գավառները¹: 15-րդ դարի վերջում Աղ-Ղոյունլուների տերությունը գտնվում էր թուլացած վիճակում և փաստացի բաժանված էր երկու մասի: 1502թ-ին Իրանում շահ է հռչակվում Իսմայիլը, ով հանդիսանում է Սեֆյան արքայատոհմի հիմնադիրը: Նախքան իշխանության գալը Իսմայիլին հաջողվում է ջախջախել Աղ-Ղոյունլուների զորքը և գահընկեց անել վերջիններիս առաջնորդ Ալվանդին²: Հայաստանն ու Ատրպատականը, որոնք գտնվում էին Ալվանդի տիրապետության տակ, մտնում են Սեֆյան Իրանի կազմի մեջ: Երևան քաղաքը դառնում է համանուն խանության կենտրոն և շահ Իսմայիլը 1504-ին այստեղ խան է նշանակում իր մտերիմներից մեկին, ով աղբյուրներում հիշատակվում է Ուսան խան անունով: Ակնհայտ է, որ վերջինիս անունը ուղղակիորեն կապված է Երևան տեղանվան հետ:

Սեֆյան տերության արևմտյան հարևանն էր Օսմանյան Թուրքիան, որը շարունակաբար նվաճողական պատերազմներ էր մղում և 15-րդ դարի վերջում իր հայացքն էր ուղղել դեպի արևելք: Հայաստանը փաստորեն բաժանված էր այս երկու տերությունների միջև, որոնց բախումը դառնում էր անխուսափելի: 1514թ-ին տեղի է ունենում Չալդրանի ճակատամարտը, որն ավարտվում է Իրանի ջախջախիչ պարտությամբ³: Այս ժամանակաշրջանից ի վեր մինչև 1639թ-ը Թուրքիայի և Իրանի հարաբերությունները կրում էին պատերազմական բնույթ: Բազմաթիվ արշավանքներն ու պատերազմներն ընդհատվում էին կարճաժամկետ խաղաղության շրջաններով, որոնք սակայն հնարավորություն չէին տալիս երկրի տնտեսությունը վերականգնելու համար: Եվ այս բոլոր

¹ Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 2007, էջ 368:

² Վ. Բաբբուրյան, Իրանի պատմություն, Երևան, 2006, էջ 297:

³ Հ. Խ. Նաջաբյան, Թուրք-իրանական հարաբերությունները 16-րդ դարում ու 17-րդ դարի առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961, էջ 74-77:

արհավիրքները, կոտորածն ու սովը, ռազմական գործողություններն ու ավերիչ արշավանքները տեղի էին ունենում հիմնականում Երևանի խանության տարածքում, որն ամբողջությամբ կամ մասամբ ընկնում էր մեկ թուրքական, մեկ իրանական տիրապետության տակ: Հայաստանը վերածվել էր ռազմադաշտի, ավերիչ արշավանքների հետևանքով դատարկվում էին գյուղերն ու քաղաքները: Այս պատերազմների ողջ ժամրությունն ընկած էր հայ ժողովրդի ուսերին, որն իր կամքից անկախ գտնվում էր հակամարտող կողմերի բախման կիզակետում:

Սակայն պատերազմի բոլոր զրկանքներին ավելանում էր ևս մի արհավիրք՝ իշխանությունների ապօրինությունները և ծանր հարկահանությունը: Այս երևույթները Երևանի խանության ողջ տարածքով համատարած բնույթ էին կրում:

16-ից 17-րդ դարերում Իրանում կայուն հարկային համակարգ չկար: Բանն այն է, որ պարսից արքունիքում պաշտոնները վաճառվում էին, ուստի այն անձինք, ովքեր շահական զանձարանին վճարում էին պաշտոն ստանալու համար, հետագայում ջանք չէին խնայում իրենց գումարները հետ հավաքելու գործում⁴: Այս պատճառով ամեն մոր պաշտոնյան մոր հարկեր էր ավելացնում, ապօրինություններ էր գործում և շահագործում էր իրեն ենթակա բնակչությանը: Շահական արքունիքը շահագրգռված էր պաշտոնյաների հաճախ փոփոխության հարցում, քանի որ ամեն անգամ հերթական կաշառքն էր ստանում պաշտոնի թեկնածուից: Այս հանգամանքը հասկանում էին հենց իրենք՝ պաշտոնյաները, և ստանալով իրենց պաշտոնը, անմիջապես ծանր հարկեր էին պարտադրում ժողովրդին: Բացի գոյություն ունեցող հիմնական հարկատեսակներից, տեղական իշխանությունները ժողովրդից զանազան հարկեր ու տուրքեր էին գանձում: Ինչպես դիպուկ բնորոշել է մեծանուն պատմաբան Լեոն, Երևանի խանությունում և ընդհանրապես Իրանում գոյություն ունեցող հարկային համակարգի ամենահավոր կողմը անորոշությունն էր, որը տիրում էր թե քաղաքային, թե գյուղական բնակչության շրջանում⁵:

1639թ-ին կնքված խաղաղությունը Օսմանյան թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև տևում է շուրջ 80 տարի: Այս ընթացքում Երևանի խանության դերն ու նշանակությունը զնալով մեծանում է: Երևանի բեյլերբեյն իր խանության տարածքում ուներ գրեթե անսահմանափակ իշխանություն: Երևանի խաներն ունեին արտոնյալ կարգավիճակ և ոչ միայն ազատված էին հարկերից, այլև շահական արքունիքից ամեն տարի գումար էին ստանում իրենց զորքերը պա-

⁴ Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 632-633:

⁵ Լեոն, Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1-ին, Երևան, 1969, էջ 92:

հելու համար⁶։ Երևանի խանութային վարչական համակարգն իր մեջ էր ներառում բազմաթիվ պաշտոններ։ որոնցից հիմնականներն են խազնա-աղասին (զանձապետ), սանդուխտար աղասին (ծախսարար), անբարդսար աղասին (շտեմարանապետ), սերաֆյուլ բեկը (զորապետ), մուհասիլը (խանական և դատատանական հրամանները կատարող) և դարուղան (ոստիկանապետ)։ Բնյեբեյից հետո երկրորդ պաշտոնյան Երևանի խանութային տարածքում գլխավոր միտքն էր, ով իրականացնում էր տնտեսական կառավարումը, մասնավորապես հարկային ոլորտը։

Արևելյան Հայաստանի տարածքում բնակվող ողջ հայ ժողովուրդը հարկատու էր իրանական պետությանը։ Հայերը, լինելով նվաճված ժողովուրդ, համարվում էին ռայա կամ զիմնի, ինչը նշանակում էր հպատակ, հարկատու, և պարտավոր էին գլխահարկ վճարել։ Գլխահարկը գանձվում էր հիմնականում քրիստոնյաներից։ Այս հարկատեսակը կոչվում էր նաև ջիզիե կամ բաշի-փուլի։ Գլխահարկը վճարում էին բոլոր տղամարդիկ՝ սկսած չափահասության տարիքի հասածներից մինչև զառամյալ ծերունիները։

Հողային հիմնական հարկերը Երևանի խանությունում բաժանվում էին երեք խմբի։ Բաժանվում էր բերքով, այլ կերպ ասած այն բնահարկ էր։ Այս հարկատեսակը տրվում էր խանին և Երևանի խանության տարբեր շրջաններում ու գյուղերում փոփոխական մեծություն էր։ Խանը սահմանում էր, թե տվյալ գյուղն ինչքան բաժիրա պետք է հանձնի՝ ելնելով գյուղի կամ բնակավայրի բնակչիմայական պայմաններից, հողերի բերրիությունից, ոռոգման ջրերի հնարավորությունից և այլ հանգամանքներից։ Բարենպաստ պայմաններում գտնվող գյուղերում այն կարող էր կազմել մինչև անգամ ընդհանուր բերքի մեկ երրորդը։ Վկայված են նաև դեպքեր, երբ սարդարը որոշակիորեն քչացրել է բաժիրայի չափը, սահմանելով այն ընդհանուր բերքի մեկ չորրորդի և նույնիսկ մեկ հինգերորդի չափով։ Այս չափաբաժնով հարկվում էին հիմնականում սահմանամերձ գյուղերը և ընդհանրապես անբարենպաստ բնակչիմայական պայմաններ, բարձրլեռնային դիրք ունեցող բնակավայրերը։ Բաժիրայի վճարման չափը սեֆյան տիրապետության շրջանում գնալով մեծանում էր։ Համաձայն Սիմեոն Երևանցու հեղինակած <<Համբո>> աշխատության՝ տեսնում ենք, որ բաժիրան 16-ից 18-ի դարերում հիմնականում կազմում էր բերքի մեկ հինգերորդը, սակայն հետագայում բաժիրայի չափը հասնում է մեկ երրորդի։ Բաժիրան պետական հարկ էր և հարկ վճարող էին հանդիսանում բոլոր նրանք, ովքեր զբաղվում էին հողագործությամբ։ Շատ քչերն էին ազատված բաժիրայից, որոնք կոչվում էին մաղաֆներ կամ թարխաններ։ Թարխանությունը երեք

⁶ Թ և Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 2007, էջ 369։

տեսակի էր լինում: Առաջինն այն էր, որ բահրա վճարողներն առհասարակ ազատվում էին այս հարկատեսակից: Երկրորդ տեսակի թարխանությունն իրենից ներկայացնում էր բահրայից մասնակի ազատում և տարածվում էր միայն սերմացուի մասով: Գողագործը թույլատրվածից ավելի ցանելու դեպքում պետք է բահրա վճարեր ավելի ցանածի մեկ հինգերորդի մասով: Թարխանների երրորդ տեսակը կազմում էին այն անձինք, ովքեր ազատված էին մյուս հարկատեսակներից, սակայն հանդիսանում էին բահրա վճարողներ: Հարկ է նշել, որ թարխանությունը կարող էր շնորհվել ինչպես անհատներին, այնպես էլ առանձին գյուղերի և ընտանիքների⁷:

Էջմիածինը և նրան ենթակա գյուղերն ունեին սահմանափակ ազատություն բահրայի հարցում: Մայր Աթոռի վարած քաղաքականությունը թարխանության իրավունք ստանալու համար նկարագրված է Սիմեոն Երևանցու <<Ջամբո>> աշխատության մեջ⁸:

Հատկանշական է, որ բահրայից թարխանությունը շնորհվում էր ոչ թե բերքի համապատասխան մասը հարկումից ազատելու տարբերակով, այլ սահմանվում էր այն հողաբաժինը, որից ստացված բերքը ենթակա չէր հարկման: 1645թ-ին Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը ստանում է մեկ գութանի չափով թարխանության իրավունք⁹: Հետագայում այս չափն ավելանում է և Նաղիթ շահի իշխանության տարիներին, երբ հայոց կաթողիկոսն էր Աբրահամ Կրետացին, բահրա չվճարող հողերի քանակը հասել էր 66 խալվարի¹⁰:

Բահրայից բացի, որն ինչպես տեսանք հիմնականում կազմում էր հողից ստացվող բերքի մեկ հինգերորդը, Երևանի խանությունում տարածված մյուս հարկատեսակը մյուլքն էր: Մյուլքը գանձվում էր մասնավոր իրավատիրոջ կողմից, ով կոչվում էր մլքատեր: Այս հարկատեսակը վճարում էին ոչ բոլոր գյուղերը: Մյուլքի չափը հիմնականում սահմանված էր հողից ստացվող բերքի մեկ տասներորդի չափով: Այս չափաբաժինը գրեթե անփոփոխ պահպանվել էր մինչև 19-րդ դար, երբ այդ մասին հիշատակություններ ենք գտնում ռուս հեղինակ Շոպենի մոտ¹¹: Մեզ հետաքրքրող ժամանակշրջանի վերաբերյալ ևս բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել ժամանակակից մատենագիրների աշխատություններում, ինչից կարող ենք եզրակացնել, որ մյուլքը հիմնականում համապատասխանել է բերքի մեկ տասներորդի չափին:

⁷ Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 418:

⁸ Սիմեոն Երևանցի, Ջամբո, Երևան, 2003, էջ 181-211:

⁹ Նույն տեղում, էջ 185:

¹⁰ Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 419:

¹¹ И. Шопен. Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, Санкт-Петербург, 1852, стр. 927.

Երևանի խանութային տարածված էր նաև անասնահարկը, որն այլ կերպ կոչվում էր նաև մալ-փուլի: Իրանի տարբեր խանութայիններում և շրջաններում այս հարկատեսակը տարբեր ձևով էր գանձվում: Օրինակ, Երևանի խանութայինում բնակվող անասնապահ քոչվոր ցեղերը անասուններ էին տալիս իրենց հոտերից, սովորաբար՝ հարյուր գլխից մեկը: Խանութային որոշ գավառներում վճարում էին ուղղակի գումարի տեսքով:

Երևանի խանութային տարածքում մեծ տարածում ուներ նաև հարկման ևս մի տարբերակ, որն էր կոռն ու բեգարը: Այն իրենից ներկայացնում էր պարտադիր ձրի աշխատանք, որին ենթակա էին պարսից տերության հպատակները: Քանի որ կոռն ու բեգարը հստակ սահմանված չէին Իրանում, ուստի այդ հանգամանքը օգտագործվում էր կալվածատերերի կողմից գյուղացիական աշխատանքը չարաշահելու համար: Վերջիններս պարտավոր էին մշակել կալվածատիրոջ հողը և կատարել այլ չվճարվող տաժանակիր աշխատանքներ:

Երևանի խանութային ազգաբնակչությունը, բացի ուղղակի հարկեր վճարելուց, ուներ նաև մի շարք պարտականություններ անմիջապես խանի առջև: Օրինակ՝ անասնապահությանը զբաղվողները պետք է պահեին խանի ոչխարներն ու ձիերը, նրան յուր ու բուրդ տալին, ինչպես նաև հավ և ծու: Որոշ վայրերի բնակիչներն էլ պարտավոր էին փայտ կամ ածուխ հավաքել խանի համար:

Այնուհայտ է, որ հարկային բեռն անտանելի ծանր էր բնակչության համար: Մասնավաճ, որ հարկահանության գործընթացն ուղեկցվում էր ապօրինություններով և խանական իշխանավորների ու հարկահանների կամայականություններով: Գյուղերում վիճակը դառնում էր անտանելի հատկապես բերքահավաքի շրջանում, երբ խանի ուղարկած հարկահանները գալով գյուղեր, տնից տուն անցնելով, երբեմն նույնիսկ ամիսներով դուրս չէին գալիս գյուղերից և ողջ ընթացքում մսխում էին գյուղացու ունեցվածքը: Հայ գյուղացին իրավունք չուներ տնօրինելու իր մշակած հողից ստացված բերքն առանց հարկահանների թույլտվության և վերահսկողության: Առանց նրանց հրամանի չէր կարելի նույնիսկ ամբարել պաշարը կամ էլ բերքահավաք կատարել: Բնականաբար, բերքի լավագույն մասը հարկվում էր, և հաճախ գյուղացուն բաժին էր հասնում մի չնչին մաս, որով նա հագիվ պահպանում էր իր խղճուկ գոյությունը: Այս իրավագուրկ և դաժան կացությունն օրհասական էր դառնում հատկապես այն տարիներին, երբ անհաջող բերք էր ստացվում երաշտի, որևէ բնական աղետի կամ էլ միջատների ու կրծողների պատճառով: Ժամանակի հայկական աղբյուրներում բազմաթիվ են վկայություններն այն տարիների մասին, երբ Երևանի տարածքում մորեխ է հայտնվել, ինչին հաջորդել է սովը:

Վերը նշված հարկերը հիմնականում բնորոշ էին գյուղական վայրերի ազգաբնակչությանը: Սակայն քաղաքաբնակները, որոնք հիմնականում զբաղվում էին առևտրով և արհեստագործությամբ, նույնպես զգում էին հարկային բեռի ողջ ծանրությունը: Երևանի խանության գլխավոր քաղաքը Երևանն էր, որը հանդիսանում էր նաև առևտրական և արհեստագործական կենտրոն: Բոլոր ժամանակներում առևտրի զարգացման հիմնական խոչընդոտներից են եղել մաքսային բարձր հարկադրույքները: Ժամանակի սկզբնաղբյուրներից տեղեկանում ենք, որ մաքսը միատեսակ և հաստատուն չի եղել և ժամանակ առ ժամանակ փոփոխությունների է ենթարկվել: Հատկապես կարևոր ենք համարում Ջաքարիա Ազուլեցու հիշատակությունը, քանի որ վերջինս հանդիսացել է վաճառական: Ազուլեցին վկայում է, որ 17-րդ դարում Երևանի խանությունում կար երկու մաքսատուն՝ մեկը՝ Երևանում, մյուսը՝ Էջմիածնում¹²: Հարկ է նշել, որ մաքսը, որպես հարկատեսակ, պետք չէ հասկանալ միայն այն իմաստով, որն այն ունի հիմա: Հաճախ մաքս ասելով՝ ժամանակի հայ պատմիչները նկատի են ունեցել ոչ միայն ապրանքի արժեքից գանձվող բուն մաքսավճարը, այլ այն հարկերն ու տուրքերը, որոնք առևտրականները վճարում էին ճանապարհներից և անցակետերից, ինչպես նաև կամուրջներից օգտվելիս և այլն: Այսինքն, բացի հիմնական մաքսից, որը գանձվում էր ապրանքի համար, առևտրականները պետք է վճարեին նաև ճանապարհներին: Ըստ էության, այս հարկատեսակը սահմանում էին տեղական իշխանությունները և հաճախ կամայականորեն սահմանելով վճարի չափը, մեծ խոչընդոտներ էին առաջացնում առևտրի իրականացման համար: Հատկանշական է, որ Երևանի խաներից ոմանք գիտակցում էին այս բացասական երևույթի առկայությունը և հատուկ հրամաններով վերացնում էին ճանապարհներից ու տարբեր անցակետերից գանձվող հարկը, սակայն, որպես կանոն, դրանք բացառություններ են կազմում՝ օրինակ, Խոսրով խանը (1648-1654թթ)¹³: Ամեն դեպքում հիմնական մաքսն անփոփոխ էր: Մաքսի դրույթի վերաբերյալ ստույգ տեղեկություններ չեն պահպանվել:

Առևտրականների խավն իր մեջ ներառում էր չորս ենթախումբ՝ սովղաքյարներ, բինախտարներ, բազազներ և չարչիներ¹⁴: Ամենահարուստը սովղաքյարներն էին, որոնք զբաղվում էին մեծածախ առևտրով և հանդիսանում էին միայն մաքս վճարող ու ազատված էին մյուս հարկերից: Բինախտարները ևս մեծածախ առևտրով էին զբաղվում, սակայն նրանք չունեին նույնքան դրամական միջոցներ, որքան սովղաքյարները: Առևտրականների ամենամեծ հատ-

¹² Ջաքարիա Ազուլեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 7:

¹³ Ջաքարիա Սարկավազ, Պատմագրություն, հ. 2, Վաղարշապատ, 1870, էջ 44-45:

¹⁴ Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1500-1800թթ), հ. 2, Երևան, 1971, էջ 238:

վածը բազազներն ու չարչիներն էին: Նրանք զբաղվում էին մանրածախ առևտրով և հիմնական հարկատուներ էին համդիսանում:

Եթե գյուղական բնակչությունը գտնվում էր հողային հարկերի ու պարտադիր աշխատանքի բեռի տակ, ապա քաղաքաբնակները հիմնականում ազատված էին բնահարկերից, սակայն դա ամենևին էլ չէր նշանակում, որ քաղաքային բնակչության հարկային բեռը թեթև էր: Ստորև կներկայացնենք այն հիմնական հարկատեսակներն ու տուրքերը, որոնք ենթակա էին պարտադիր վճարման: Ինչպես վկայում է Շոպենը, ով 19-րդ դարի սկզբին եղել էր Երևանի խանությունում, տեղի բնակչությունը վճարում էր ուղղակի և անուղղակի բազմաթիվ հարկեր: Ճիշտ է, Շոպենի բերած տեղեկությունները վերաբերում են 19-րդ դարի սկզբին, սակայն որոշակի վերապահումով կարող ենք նշել, որ այս պատկերն է տիրել նաև մախոդդ երկու դարերի ընթացքում: Ուղղակի հարկերն էին քաղաքի բնակչությունից վերցվող ընդհանուր հարկը, պարտադիր նվերները կամ փեշքեշները, ջրբաժանների վարձը և քաղաքի պահապանների վարձը: Անուղղակի հարկերն էլ ափելի շատ էին. մաքս, պետական խանութներից և կրպակներից տրվող հարկ, քաղաքի հրապարակներից ու շուկաներից, պետական այգիներից ու ջրաղացներից, բաղնիքներից ու քարավանատներից, մեծ ու փոքր կշեռքներից օգտվելու հարկեր, ինչպես նաև բազմաթիվ այլ տուրքեր և վճարներ որոշակի գործունեությանը զբաղվելու համար (դրամահատություն, օժառագործություն և այլն)¹⁵: Անուղղակի հարկերը հավաքագրում էին կապալառուները: Չմայած ձևակերպելով հաստատված էին այս բոլոր հարկ ու տուրքերի սահմանաչափերը, սակայն դրանք ունեին ձևական նշանակություն և ըստ էության հանդիսանում էին այն նվազագույն չափը, որի վրա ավելանում էին կապալառուի կողմից ապօրինաբար ավելի գանձվող մասը:

Բացի վերը նշված պետական հարկերից ու տուրքերից, Երևանի բնակչությունը ենթակա էր պարտադիր պարհակների: Սյո պարհակների բնույթը հիմնականում կայանում էր նրանում, որ քաղաքի բնակչությունը ստիպված էր չվարձատրվող ծանր աշխատանք կատարել սարդարի և ընդհանրապես քաղաքի կարիքների համար: Քաղաքի բնակիչները մշակում էին սարդարի անծնական այգիներն ու բանջարանոցները, մասնակցում էին ճանապարհաշինարարական աշխատանքներին, անց էին կացնում ջրանցքներ, կառուցում էին կամուրջներ և շենքեր, կատարում էին տարաբնույթ բանվորական աշխատանք: Պարհակների ենթակա էին քաղաքաբնակների գրեթե բոլոր խափերը՝ հողագործներն ու այգետերերը, արհեստավորներն ու առևտրականները:

¹⁵ И. Шопен, Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, Санкт-Петербург, 1852, стр. 1054-1058.

Պարիակներից ազատված էին միայն թարխանության իրավունք ունեցողները և ամենահարուստ առևտրականները՝ սովորաբարները:

Հարկահանության գործընթացը հեշտացնելու նպատակով երևանի սարդարը հանձնարարում էր քաղաքի մելիքներին կատարել հարկերի գանձումը: Մելիքներն իրենց հերթին հավաքագրում էին հարկերը համքարությունների միջոցով, իսկ համքարությունների ներսում հարկերի հավաքագրման պատասխանատվությունն ընկնում էր գլխավոր վարպետի վրա: Փաստորեն, առանձին անհատների վճարած հարկերը գանձարան էին մտնում մի քանի մարմին անցնելով, որն էլ առիթ էր դառնում կաշառակերության, ապօրինությունների և կանայականությունների համար:

Հայերի դրությունն անտանելի էր դարձնում ևս մի ահավոր երևույթ, որը տարածված էր թե Իրանում, թե Թուրքիայում. դա մանկահավաքն էր¹⁶: Թեև այս զարհուրելի երևույթը պաշտոնական հարկատեսակ չէր, սակայն համատարած կիրառում ուներ: Չնայած պարսից շահերը հրաման էին արձակում քրիստոնյաների շրջանում մանկահավաք չիրականացնելու վերաբերյալ, սակայն որպես կանոն, դա անտեսվում էր: Այս արատավոր գերեվարությունների զոհ էին դառնում ինչպես աղջիկները, այնպես էլ հայազգի պատանիները, որոնք բռնի կերպով տարվում էին շահական հարեմներ: Խանական պաշտոնյաները գերեվավարում էին մանկահասակ հայ երեխաներին, ապա փրկագին էին պահանջում նրանց ծնողներից՝ գիտակցելով, որ վերջիններս պատրաստ են իրենց ողջ ունեցվածքը տալ, միայն թե փրկեն իրենց զավակներին:

Ամփոփելով, ցանկանում ենք ևս մեկ անգամ նշել, որ բոլոր հարկերն ու տուրքերը, վճարների չափերն ու տուգանքները, որոնք վկայված են աղբյուրներում, նվազագույն չափով են ներկայացնում հայ բնակչության ծանր վիճակը, քանի որ իրականում հարկահանությունն ուղեկցվում էր անօրինակ դաժանությամբ ու ապօրինություններով:

Yerevan Khanate's tax system in 16-17 centuries

In 16th century Eastern Armenia came under the Safavid dominance. Yerevan became the center of the newly formed Yerevan Khanate. In 16-17 centuries Armenians, being the main part of the Yerevan Khanate's overall population, were heavily suffering from the Ottoman-Persian wars. Besides, Armenians were imposed various sorts of heavy taxes and dues. The main taxes, dues and the whole taxation system of the Yerevan Khanate are comprehensively analysed in this article.

¹⁶ Լեո, Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1-ին, Երևան, 1969, էջ 125-128: